ԿԱՐԻՆԵ ԲԱԲԱՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԵՍԱՐԱՑՈՒ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

ԽԱՉԱՏՈՒՐ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ

Խաչատուր արքեպիսկոպոս Կեսարացին ԺԷ դարի հայոց եկեղեցական, հոգեւոր-մշակութային կյանքի ակնառաւոր գործիչներից է, որի նվիրյալ կերպարը, ցավոք, սրտի ամբողջովին բացահայտված եւ ներկայացված չէ հայ հասարակության լայն զանգվածներին:

Խաչատուր վարդապետ Կեսարացին բնորոշվել է իբրեւ «արտաքոյ կարգի խիստ կեանք» ապրող եւ «սրբութեան հոչակ» վայելող մեկը[1], որի գործունեությունը մեծապես պայմանավորեց Նոր Ջուղա եւ նրան հարող շրջանները բնակեցված հայության, ապա նաեւ իր ժամանակի արեւելահայության մշակութային, հոգեւոր-կրթական առաջընթացը:

Խաչատուր Կեսարացին ուսանել էր Սյունյաց Մեծ անապատում, աշակերտել 1613 թվականից հաստատությանը միաբանած Մովսես Տաթեւացի վարդապետին, որը շուտով Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ դարաշրջանի հայոց մշակութային կյանքը վերակերտողը պիտի դառնար: Աղբյուրների ուսումնասիրությունը արդարացնում է լատին հոգեւորականի գործածած «սրբության հոչակ» արտահայտությունը, ինչպես կհամոզվենք առաջիկայում՝ ձեռագրական հիշատակարանները վկայակոչելիս:

Խաչատուր Կեսարացու ինքնությանը վերաբերող անդրանիկ տեղեկություն գտնում ենք նրա ժամանակակցի՝ Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրության» 1616-1618 թվականներին առնչվող անցուդարձերի նկարագրության դրվագում. «ՌԿԵ

1 **Հ. Ն. Ակինեան**, Մովսէս Գ. Տաթեւացի Հայոց Կաթողիկոսն ու իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 167-168:

(1616) թուականին հրաժարեցի կամօք իմովք ... եւ ... ուղի անկեալ գնացաք յԵրուսաղէմ, երկու Ջատիկ անդ արարաք: Եւ նաեւեալ գնացաք ի Կիպրոս, եւ ելալ յանապատ մի ի միաբնակաց վանսն, որ սուրբ Մակար ասի, որ էր խբթոց ազգացն, նոքա սպառեր են, մեր ազգացն են տուեր, որ կայր անդ ի մեր ազգացն երկու արեղայ, մէկ քահանայ Խաչատուր անուն, եւ որ այժմ վարդապետ է եւ առաջնորդ Ջուղայոցն, եւ միսն Վարդան մոնոզոն, որ այժմ քահանայ է... զի նա է հայր վանացն, եւ երկու-երեք այլ աղօթաւոր ծերք: Եւ կացաք... անդ երկոտասան ամիս...»[2]:

Նախ ճշտենք տեղեկության ժամանակագրական ցուցումները. 1616 թվականի Ջատկից առաջ նա դուրս է եկել ճանփորդության, «երկու Ջատիկ» կատարել Երուսաղեմում, ասել է, թե՝ Կիպրոս է մեկնել 1617 թվականի ապրիլից հետո եւ այնտեղ մնացել մեկ ամբողջ տարի, ուրեմն մինչեւ 1618 թ.: Դարանաղցին Սուրբ Մակարի վանքում հաստատված է տեսել Խաչատուր Կեսարացուն եւ որովհետեւ իր ապրած ժամանակահատվածում Խաչատուրի մեկնումի մասին չի հիշատակում, ուրեմն նա վանքում է գտնվել[3]: Խաչատուրի՝ Կիպրոս գալու պատճառները մասամբ կռահելի են դառնում Դարանաղցու այն տեղեկությամբ, թե նա ամուսնացյալ քահանա է եղել եւ հետագայում է կուսակրոնություն ընդունել ու դարձել վարդապետ եւ Ջուղայի առաջնորդ նշանակվել: Հետեւաբար՝ այրիացած Խաչատուրը նախընտրել է վանական կյանքը, եւ որովհետեւ այս շրջանում արեւմտահայոց միջավայրում Պոլսո պատրիարքարանին ենթակա վանական հաստատությունները խիստ սակավաթիվ էին (Արմաշի Զարխափան Ս. Աստվածածին, Կիպրոսի Ս. Մակար), Գրիգոր Կեսարացու սանը ոչ պատահականորեն հայտնվել է Կիպրոսի վանքում (Արմաշավանքը այս տարիներին բավականին աղետյալ վիճակում էր, որի վերանորոգումը հոգում էր դարձյալ նույն Գրիգոր Դարանաղցին)[4]:

Ինչպես երեւում է նույն Դարանաղցի պատմիչին պատկանող ձեռագիր Աստվածաշնչի հիշատակարանից, Կիպրոսում մեկ-երկու տարի մնալուց հետո Խաչատուր Կեսարացին 1618 կամ 1619 թվականներին մեկնել է Երուսաղեմ: Աստվածաշնչի Եզեկիելի մարգարեության վերջում պահպանվել է Խաչատուրի հիշատակարանը. «Զսակաւ աշխատողս ի սմա Կեսարացի Խաչատուր անուամբ միայն աբեղայս աղաչեմ միով «Հայր մեր, որ յերկինս»-ի յիշել ի Տէր, եւ Քրիստոս զյիշողքդ յիշէ ի միասանգամ գալստեան իւրոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն: Հայր մեր»[5]: Ճիշտ է, հիշատակարանը թվական չի կրում, բայց Եզեկիելի մարգարեությանը նախորդող Եսայիի վերջում, որին հաջորդել է Խաչատուրի ընդօրինակումը, նշված է գրչության թվականը՝ 1617 թ. հունիսի

2 «Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ»: Հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան: Երուսաղէմ, 1615, էջ 183:

3 Ի դեպ, մեր կարծիքով, Գրիգոր Դարանաղցու գործածած «միաբնակ» տերմինը պիտի ընկալել իբրեւ «միաբնակ» (մոնոֆիսիտ) եւ ոչ «միաբանություն»: Այդ հաստատվում է նաեւ վանքիս նախապես «խբթիներին» (ղպտիներին, կոպտերին) պատկանելու փաստով:

4 Հմմտ. **Գրիգոր Դարանաղցի**, նշվ. աշխ., էջ 423: Արմաշի վանքի հետ կապված հարցերի քննությունը տե՛ս Պ. Մուրադյանի «Արմաշի վանքը» գրքում: Եր., 1998:

5 Տես՝ **Գրիգոր Դարանաղցի**, նշվ. աշխ., էջ 606:

28, ուրեմն Եզեկիելը գրված է այդ թվականից հետո եւ 1621 թվականից առաջ (վերջինս Եզեկիելին հաջորդող «Կտրակ երկոտասան մարգարէից» դրվագի գրչության թվականն է): 1621-ին Խաչատուրին գտնում ենք Երուսաղեմից Կ. Պոլիս վերադարձած եւ տեղիս Ս. Նիկողայոս եկեղեցու (հայտնի է Կոմրուկի Ս. Նիկողայոս անունով)[6] Դարանաղցու Աստվածաշնչի նկարչական զարդարանքը կատարելիս: Հռոմայեցոց թղթի վերջում Գրիգորի թողած հիշատակարանը տեղեկացնում է. «Գրեցաւ հինգ տետրս ի Կոմրուկի Սուրբ Նիկողոս եկեղեցիս, ի մեր նորաշէն վերնատունս... եւ զիս զանպիտան փծուն գրիչս՝ զԳրիգոր միայն անուամբ վարդապետս եւ զՏէր Խաչատուր խարանազգեաց խստակրօն ամենաշնորհ աբեղան՝ զբանի սպասաւորն, որ եւ աշակերտ գրոց եւ հնազանդ մեզ, որ աշխատեցաւ ի ոսկելն եւ ի ծաղկելն, եւ զամենայն աշխատառոսն մեր յիշեսջիք ի Քրիստոս...»:

Գրիգոր Դարանաղցին գովեստների մեջ առանձնապես բառեր շռայլող հեղինակ չէ, ուստի Խաչատուրին բնորոշող արտահայտությունները պիտի համարել միանգամայն իրական ու բովանդակային բնութագրումներ:

Խիստ տարողունակ են հիշատակարանի մյուս գնահատությունները՝ «ամենաշնորհ աբեղա» եւ «բանի սպասաւոր»: Առաջինի տակ նախ գրչության ու ծաղկման հմտություն պետք է հասկանալ, որը թե՛ գրիչ ընդօրինակող է (այդ մասին էր խոսում նախորդ հիշատակարանը), թե՛ «ոսկող» ու «ծաղկող», միաժամանակ նաեւ՝ «բանի սպասաւոր», որ Ս. Գրքի իմացությունից ու աստվածաբան լինելուց զատ քարոզչական կարողություն է վկայում: Գրիգոր Դարանաղցին ոչ պատահականորեն է մասնավորեցնում, թե այդ ամենով օժտված աբեղան «աշակերտ գրոց եւ հնազանդ մեզ» է: «Գրոց աշակերտը» վարդապետի ղեկավարությամբ ու վերադիտությամբ աստվածաբանության մեջ հմտացողն է: Եւ հիրավի, իր «Ժամանակագրության» մեկ այլ դրվագում Գրիգոր Դարանաղցին անհրաժեշտ է նկատում Ս. Նիկողայոսի նույն եկեղեցում Խաչատուր Կեսարացու ներկայությամբ կատարված մի այլ իրողության մասին պատմել: Այն օրերին, երբ պատմիչը Արմաշի եւ Պալատի Ս. Հրեշտակապետաց եկեղեցիների կառուցման համար (ավելի ստույգ՝ վերակառուցման-նորոգման համար) հանգանակություն էր կատարում, Զանկչի անունը կրող մեկը զանազան «հրաշագործություններ» է կատարում, որին եւ հանդիպում է Կոմրուկի Ս. Նիկողայոս եկեղեցու աբեղա Հակոբը: Զանկչին փող է կորզում այս աբեղայից. «Եւ անդ լինէր Խաչատուրն, որ այժմ վարդապետ եւ եպիսկոպոս է ի Սպահան, յայնժամն աշակերտ անուն էր առ մեզ. նա աղաղակեաց ասելով թէ՝ Մի հաւատար, սուտ է նա եւ այդ ոսկերքդ այդպէս չար հնարիւք կու եփէ ու կու վաճառէ, ես գիտեմ զնա ի վաղուց հետէ, նա շատոց է վաճառել ձեռք եւ գլուխ եւ բազուկք եւ այլ ոսկերաց: Եւ այնմ բանից փոքր առաք ի վերայ հիւանդաց եւ ոչ մի նշան չտեսաք, որ այնու յայտ է սրբոցն ոսկերն լինելով եւ մանաւանդ որ նորագիւտ լինի...»[7]:

---

6 Կոմրուկի կամ Կէօմրիւկի Ս. Նիկողայոս եկեղեցին գտնվելիս է եղել էտիրնե Գաբուի մոտ, որի տեղում այժմ Քեֆելի ճամին է:

7 **Գրիգոր Դարանաղցի**, նշվ. աշխ, էջ 425:

Այսպեղ մեզ համար կարեւորը սուտ հրաշագործի խաբեբայության իրողությունը չէ, այլ որ Գրիգոր Դարանաղցին նորից հիշեցնում է Խաչատուրի «յայնժամ աշակերտ անուն» առ ինքը լինելը, միայն անհրաժեշտ է պարզել, թե այդ «յայնժամի» տակ իրականում ո՞ր թվականին է վերաբերում: Չանկչիին վերաբերող դրվագի սկզբում նրա երեւալը «ի կողմանս Նիկիոյ» թվագրված է ՌՀԲ (1623), որը բնավ չի համապատասխանում Խաչատուր Կեսարացու կենաց տարեգրությունը ներկայացնող մյուս աղբյուրների հաղորդումներին: Ճիշտ է, Գրիգոր Դարանաղցին ոչ միայն ժամանակակից է, այլ նաեւ նրա ուսուցիչներից մեկը, եւ այնուամենայնիվ՝ վերջին դրվագի եղելությունը 1623 թվականով արձանագրելը ստույգ չպետք է լինի: Նախ հիշենք, որ Դարանաղցին վկայակոչվող ժամանակագրությունը գրել- ավարտել է 1636 թ. անցքերի հիշատակումով[8], ուրեմն 20-ական թվականների եղելությունները կարող էր տարեգրել հիշողությամբ, ուստի եւ, հավանաբար, վրիպումով: Խնդիրն այն է, որ մենք ձեռքի տակ ունենք 1623-ին վերաբերող երեք միմյանցից անկախ աղբյուր, եւ այդ երեքն էլ Խաչատուր Կեսարացուն ճանաչում են իբրեւ արդեն Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդ: Այսպես. Սիմեոն Ջուղայեցի քահանան Հայոց ՌՀԲ (1623) «ի մայրաքաղաքս Ասպահան, որ Շօշ կոչի, ի թագաւորութեան պարսից Շահ Ապասին եւ առաջնորդութեան մերոյ գեօղիս Ջուղայոյ Խաչատուր վարդապետին, Խաւջայ Նազարին» ընդօրինակում է Գրիգոր Տաթեւացու «Հարցմանց գիրքը»[9]: Խաչատուրի առաջնորդության այդ նույն 1623 թվականն են հավաստում այլ ձեռագրերի հիշատակարաններ եւս՝ մասնավորեցնելով, թե ընդօրինակությունը կատարվել է «ի մեծ թուականիս Հայոց ՌՀԲ (1623) ի Շօշ քաղաքս՝ Ասպահան, ի հայրապետութեան տեառն Մելքիսեդ Կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ յառաջնորդ մերոյ Աթոռոյ սբ. ուխտի Ամենափրկչի վանացս Խաչատուր ռաբունապետին, եւ թագաւորութեան...»[10]:

Այսպիսով, հիմք ունենք եզրակացնելու, թե Խաչատուր Կեսարացու առաջնորդությունը Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում սկսվում է 1621-ից հետո եւ 1623-ից առաջ: Անշուշտ, կարելի էր Պոլսից մեկնելու եւ Նոր Ջուղա գալու տարի նշանակել այդ երկու թվականների միջեւ ընկած 1622-ը, բայց նման եզրակացությունը փակում է Խաչատուր վարդապետի կենսագրության այլ մանրամասնությունների ուսումնասիրության դուռը: Այսպես. Նոր Ջուղայի պատմության երախտաշատ ուսումնասիրող Հարություն Տեր-Հովհաննիսյանցը վստահ է, թե Խաչատուր վարդապետը Էջմիածնից նվիրակի պաշտոնով 1620-ին եկել է Նոր Ջուղա եւ նույն թվականին «ընտ խնդրոյ ժողովրդեանն» ստանձնել առաջնորդության Աթոռը[11]:

---

8 Տե՛ս անդ, էջ 585:

9 Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի», հատ. Ա, կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 763:

10 «Հայերեն ձեռագրերի ժէ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.)», հատ. Բ, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Եր., 1978, էջ 100 (այսուհետեւ՝ ՀՁՀ, ժէ դար): Հմմտ. նշվ. աշխ., էջ 107: Վերջինս նույնական է նախորդ ծանոթագրության մեջ հղվածին:

11 «Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան», աշխատասիրեալ ի պ. Յարութիւնէ Թ. Տէր-Յովհաննեանց, հատ. Բ, Ի Նոր Ջուղա, 1881, էջ 22 (այսուհետեւ՝ **Հ. Տէր- Յովհաննեանց**, Պատմութիւն...):

Հ. Տեր-Հովհաննիսյանցը, պիտի ենթադրել, չէր կարող ծանոթ լինել Մաղաքիա արքեպս. Օրմանյանի սեփականությունը հանդիսացող ձեռագիր Աստվածաշնչի հիշատակարաններին, որոնցից մեկը, ինչպես վերևում տեսանք, գրված պիտի լինի 1621-ին Կ. Պոլսում եւ խոսում է Խաչատուր աբեղայի ձեռքով «ոսկած» ու «ծաղկած» լինելու մասին: Ուրեմն, ըստ այս տեղեկության, նա չէր կարող 1620-ին Էջմիածին, ապա եւ իբրեւ նվիրակ Նոր Ջուղա եկած եւ առաջնորդություն ստանձնած լինել[12]: Արդ, Զաքարիա Էջմիածնեցի գրչի 1625 թ. հիշատակարանից տեղեկանում ենք, որ Մովսես Տաթեւացի «հեզահոգի եւ փիլիսոփայոյս մեծ վարդապետը» եւ Երեւանի Ս. Անանիայի «քաջ ըաբունապետը» «...ի ժամանակս ծերութեան իւրոյ ի բաց ընկեց զտկարութիւն մարմնոյ, գնաց ի Պարսկաստան եւ քարոզեաց զազգս քրիստոնէից եւ ուղղեաց զամենայն կարգ եւ սահմանք եկեղեցւոյ: Եւ նստոյց անդ մի ի պատուական աշակերտաց իւրոց տէր Խաչատուր Կեսարացին հովիւ եւ վարդապետ: Եւ ինքն դարձեալ եկն երկիրս մեր Էրեւան, ի սուրբ ուխտս առաքելոյն Անանիայի»[13]:

Մինչ առաջնորդության տարին ճշգրտելը փորձենք պարզել, թե ե՞րբ կարող էր Խաչատուր Կեսարացին աշակերտած լինել Մովսես Տաթեւացուն: Առաքել Դավրիժեցին եւս 1630 թ. նվիրակության մեկնելու կապակցությամբ հիշում է, որ Խաչատուր Կեսարացի վարդապետը Մովսես Կաթողիկոսի (իմա Տաթեւացու) «Մեծ աշակերտն» է[14]: Ինքնին հասկանալի է, թե այս տեղեկությունները չեն կարող վերաբերել Երեւանում, ապա եւ Էջմիածնում Մելքիսեթ վարդապետ Վժանեցու դպրոցին, ուր նվիրակությունից վերադառնալուց հետո ունկնդիր եղավ Խաչատուր վարդապետի աշակերտ Սիմեոն Ջուղայեցին[15]: Մովսեսին աշակերտելու համար, կարծում ենք, Խաչատուր Կեսարացին ուսանած պիտի լիներ Սյունյաց Մեծ անապատում, ուր երկու դասանամյակ գործում էր Մովսեսը: Ի դեպ, նրանք գուցեեւ միասնաբար եղել են Գրիգոր Կեսարացու սաները՝ հիմնականում նրա բազմակի (հինգ անգամ) պատրիարքացման տարիներին: Ցավոք, տվյալներ չունենք մասնավորեցնելու, թե ե՞րբ է Խաչատուր Կեսարացին դարձել իր ավագ սերնդակցի աշակերտը, բայց եւ հիմք չունենք կասկածի տակ առնելու այդ իրողությանը վերաբերող տեղեկությունները: Ի դեպ, Հ. Տեր-Հովհաննիսյանցը համոզված չէ, թե Մովսես Կաթողիկոսի կողմից նվիրակության ուղարկված Խաչատուր վարդապետը նույն Նոր Ջուղայի առաջնորդ Կեսարացին է, ուստի անհավատալի է համարում Մ. Չամչյանի երկում եղած նույնացումը[16] եւ երկու Խաչատուր վրդ. Կեսարացու

12 Պիտի ենթադրել, որ Ա. Ալպոյաճյանը նկատել է նշյալ 1620 թվականի հակասությունը այլ աղբյուրների հաղորդումներին, ուստի առանց մանրամասնությունների մեջ մտնելու սրբագրել է այն 1621 (տե՛ս **Ա. Ալպօյաճեան**, Պատմութիւն հայ դպրոցի, Գահիրէ, 1946, էջ 526):

13 ՀՁՀ, ԺԷ դար, հատ. Բ, էջ 175:

14 Տե՛ս **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, էջ 298:

15 Այդ դպրոցի մասին տե՛ս Հ. **Ն. Ակինեան**, Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 200-207, նաեւ՝ **Խաչիկ Սամուէլեան**, Մելքիսեթ վարդապետ Վժանեցին եւ Ոսկան Երեւանցու ուսումնառութիւնը Երեւանում 1631 թուականին, «Հայկազեան հայագիտական հանդէս», հատ. ԺԸ: Պէյրութ, 1998, էջ 75-86:

16 «Պատմութիւն Հայոց, յօրինեալ ի հայր Միքայէլ վրդ. Չամչեանց», հատ., Գ, Վենետիկ, 1786, էջ 633-638:

գոյության ենթադրում[17]: Սակայն կասկածը անհիմն է, որովհետև Մ. Չամչյանը վերաշարադրում է Առաքել Դավրիժեցուց և ժամանակի այլ աղբյուրներից քաղած նյութերը: Նվիրակության մեկնող Խաչատուրը Կեսարիայում խորհրդակցում է Գրիգոր վարդապետի հետ (նա նոր էր հրաժարվել 1626-1629 թվականներին հինգերորդ անգամ պատրիարքական աթոռակալությունից), որը հրաշալի գիտեր Լեհաստանում ու այլ երկրներում հայոց միջավայրում տեղի ունեցող դավանական-մշակութային անցուդարձերը: Բավական է հիշել թեկուզ, որ նա եռանդագին պաշտպանում էր իր սան Մովսես Տաթևացու կեցվածքն ու բոլոր ձեռնարկումները: Գրիգոր Կեսարացին քաջություն էր ունեցել բացահայտորեն հանդիմանելու Մելքիսեդեկ Կաթողիկոսին կաթոլիկության հանդեպ ցուցաբերած հանդուրժողականության և Հռոմից օգնության ակնկալիքներ ունենալու համար:

Խաչատուր Կեսարացին լիովին գոհացնում էր այն պահանջները, որ նվիրակին ներկայացնում են Գրիգոր Կեսարացին ու նրա ժամանակակիցները: Առաքել Դավրիժեցու խոսքերով ասած՝ «Եւ էր Խաչատուր վարդապետն այր հեզ եւ հանդարտ եւ քաղցրաբարոյ, ոչ անիմաստ եւ անբան, այլ իմաստուն եւ բանիբուն, որ լոկ տեսութեամբ միայն շահէր զառ ինքն պատահեալսն, որոյ վասն զնա կարգեցին նուիրակ»[18]:

Այսպիսով, Խաչատուր Կեսարացին հիրավի աշակերտել է Մովսես Տաթևացուն, նրա առաջադրմամբ ու հորդորով դարձել նորահաստատ Ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդ (ուրեմն եւ՝ թեմակալ), իսկ այնուհետև նույն Մովսես Տաթևացու (1629-ից՝ արդեն կաթողիկոս) հանձնարարությամբ մեկնել Լեհաստան նվիրակության: Նրա կենաց տարեգրության որոշ հարցեր իրենց լուծումն են գտնում Ամենափրկիչ վանքի «ի ներքնահարկի սեղանոյ» գտնվող «յերազայ արձանագրութեան» (իմա՛ տապանագրի) հաղորդումներում.

Ի հանգստի ասա ամփոփի մաքուր մարմին վարդապետի
Խաչատուր սրբազանի՝ հեզեւոդի տեառն Յիսուսի,
Որ էր տեղեաւ Կեսարացի, գործով սուրբ, հեզ եւ արի.
Բարձեալ յուս իւր զլուծ Քրիստոսի՝ առաջնորդէ նորին հօտի:
Երեսնամեայ յայս գործ յանձնի՝ սմա նստիլ յայսմ աթոռի,
Կրէ յանձին զվարս անմարմնի, մնայ մինչեւ յիսուն վեցի
Յանցաւորացս նա զատի հազար Ղ եւ Ե թուի[19]:

Դժվարանում ենք ստույգ որոշել, թե այս արձանագրությունը «յերազայ» կոչելով Հ. Տեր-Հովհաննիսյանցը ի՞նչ է հասկանում՝ «հերազայում գրված», թե՞ «ստորեւ բերվող»: Բոլոր պարագաներում տապանագրի բովանդակած տվյալները մեզ առավել ճշգրիտ են թվում. 1095-ին (=1646 թ.) «յիսուն վեց» տարեկան հասակում մահացածը ծնված

17 **Յ. Տէր-Յովհաննեանց**, նշվ. աշխ., էջ 24-25, ծան. 2:
18 **Առաքել Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 298:
19 **Յ. Տէր-Յովհաննեանց**, նշվ. աշխ., հատ. Բ, էջ 24:

պիտի լինի 1590 թվականին, ինչպես եւ նշվում է նրան վերաբերող գրականության մեջ[20]: «Երեսնամեայ յայս գործ յանձնի» արտահայտությունը հրատարակչի իսկ արդարացի մեկնաբանությամբ երեսուն տարեկան հասակում առաջնորդություն ստանձնել է նշանակում եւ ոչ 30 տարվա աթոռակալություն, ուստի Խաչատուր Կեսարացին Ամենափրկիչ վանքի վանահայր ու պարսկահայոց հոգեւոր առաջնորդ է դարձել 1620-ին: Ուրեմն Գրիգոր Դարանաղցու Աստվածաշնչի հիշատակարանի 1621-ը պիտի սրբագրել գոնե մեկ տարով՝ 1620 թ.[21]:

Հետաքրքիր է նաեւ ճշգրտել թե Խաչատուր արքեպիսկոպոս Կեսարացին ինչ դիրք ուներ կաթոլիկության նկատմամբ: Մ. Չամչյանը եւ Ն. Ակինյանը փորձել են այն տեսակետը հիմնավորել, թե Խաչատուր արքեպիսկոպոս Կեսարացին համակրել է կաթոլիկ միաբարներին:

Ինքնին հասկանալի պիտի նկատել այն իրողությունը, թե պարսկահայ վաճառականությունը ամեն կերպ պիտի ջանար ապահովել կաթողիկե դավանություն ունեցող արեւմտյան տերությունների, առավել եւս Հռոմի Ս. Աթոռի բարյացակամությունը, եթե ոչ որեւէ առավելություն կորզելու, ապա գեթ մրցակցության մեջ հալածանքի չենթարկվելու համար: Այստեղից դժվար չէ եզրակացնել, թե ԺԷ դ. առաջին տասնամյակներին Նոր Ջուղայի հայ հոգեւորականությունը հարկադրված էր չափազանց զգույշ լինել Արեւելք՝ քարոզչության եկած կաթողիկե վարդապետների առաքելությանը ընդդիմանալիս, մանավանդ որ Մովսես Տաթեւացուն նախորդած (մինչեւ 1629 թ.) որոշ հոգեւոր պետեր (կաթողիկոսներ ու պատրիարքներ) հարկադրաբար կամ այլ ելք չտեսնելով, հույսեր էին կապում Պապի ու պապականության հետ: Իր առաջնորդության առաջին տասնամյակում Խաչատուր Կեսարացին ոչ միայն վկա էր նշյալ իրողության, այլ նաեւ համակիր մի որոշ աստիճանի համագործակցության: Ն. Ակինյանը, հավանաբար, ինչ-որ գրավոր աղբյուրի հիմամբ է եզրակացնում, թե Սպահանից Հռոմ վերադարձող Կարմելյան Հովհաննես Թադեւոսին գրավոր ու բանավոր փափագներ հայտնողների մեջ էր նաեւ Խաչատուր Կեսարացին[22]: Վերջինիս, սակայն, ինչպես նաեւ նրա ուսուցիչ Մովսես Կաթողիկոսի գործակցությունը անկարելի է որակել իբրեւ կաթոլիկամետության ավանդի շարունակություն: Նրանք հրաշալի գիտակցում էին կարողությունների ու հնարավորությունների տարբերությունը եւ սթափ դատողությամբ հաշվի նստում կացության հետ:

Հայոց Եկեղեցու դավանությունը պաշտպանած լինելու, նոր միջավայրում համայնքը կազմակերպելու եւ մշակութային աշխուժացում ապահովելու համար Խաչատուր Կեսարացին ուշադրությամբ դիտարկում էր արեւելք եկող քարոզիչների ստացած պատրաստությունը՝ մանավանդ 1585 թ. Գրիգոր ԺԳ Պապի տված կոնդակով Հռոմի հայոց եկեղեցուն կից բացված վարժարանի դասընթացն ավարտե-

20 Հմմտ. **Ա. Ալպոյաճեան**, նշվ. աշխ., էջ 526:

21 Լ. Գ. Մինասյանի «Իրանի հայկական վանքերը» գրքի (Թեհրան, 1971) Ս. Ամենափրկչին վերաբերող էջերում Խաչատուր Կեսարացու չափածո տապանագիրը ներկայացված չէ (էջ 39-71):

22 Անդ, էջ 386:

լուց եւ «Դաւանութիւն ուղղափառութեան Հռոմէական եկեղեցւոյ» հայերեն ձեռնարկ հրատարակելուց հետո: Նրանց հետ, առավել եւս՝ նրանց դեմ քայլ գցելու համար Խաչատուր Կեսարացին ծրագրում էր միջոցներ ու հնարավորություններ ապահովել ազգային դպրություն ու դավանություն սերմանող դպրոց ստեղծելու եւ գրաճանաչ հոգեւոր սպասավորներին ոչ միայն ծիսական բովանդակություն ունեցող ձեռագրերի ընօրինակություններ, այլեւ նույնիսկ տպագիր ձեռնարկներ տալու հնարավորություն ստեղծել: Ասել է, թե հանդուգն միտք էր հղացել մահմեդական Արեւելքի այդ երկրում յուրովանն կրկնել տպագրության գյուտը: